

# Վ Ա Ն-Տ Ո Ս Պ \*)

## III

Խնչպէս Հայաստանի ամենայն կողմերում, նոյնպէս և Վան-  
Տոսպ գաւառի սահմանին մէջ հայոց վանքերը, որոնք Վասպու-  
րականի այս մասում բազմաթիւ են, գրաւում են երկրի ամենա-  
լաւ տեղերը, հաստատուած։ լինելով ընդհանրապէս ջրաշատ  
ձորերի բերան կամ լերանց լանջերի դիերին վայրերում։

Այդ վանքերի պատկը կազմում է Վարագայ Մենաստանը  
ս. Նշան անունով—յանուն Խաչափայտի, որը իբր թէ կախել է  
կրծքից Հոփիսիմէ նահատակը—որ տարածւում է Վարագայ լե-  
ռան արևմտ. կրծքի վրայ, ջրաշատ, դալարաւէտ և բազմաթիւ  
ծառաստաններով շրջապատուած գեղեցիկ ձորակի մէջ, քաղա-  
քից 8 մղոն հեռաւորութեամբ դէպի արևելահարաւ, որից (քա-  
ղաքից) տեսանելի լինելու արգելք է լինում մի բլրակ, որի ետև  
թագցնում է Վարագ իր գեղեցկութիւնները վասպուրականցի  
ամօթիսած նորահարսի նման։

Վարագը թիւրքերից անուաննում է «Եղդի Քիլիսէ» (եօթն  
տաճար). վաղեմի այդ երջանիկ ժամանակներում կանգուն եղող  
7 տաճարներից\*\*) մի քանիսն են այժմ միայն կանգուն մնացել,

\*) Ցեղ «Մուլճ», № 7:

\*\*) 1) Ս. Նշան, 2) ս. Աստուածածին, 3) Գետարգել ս. Նշան II, 4) ս.  
Դէսրգ, 5) ս. Սիսն (այժմ ծառայում է իբրև ցորենի շտեմարան ԽVIII դա-  
րու կէսերից սկսեալ), 6) ս. Սոսիս, որ Թերդով եկեղեցի էլ է Կոշլաւ, 7) ս.  
Յովհաննէս, բոլորն էլ խիս և միմիանց մօտ շինուած, ծածով և փոքր տեղով  
և նեղ անցքերով միմիանց հետ յարաքերութիւն ունենալով վերջին երկու եկե-  
ղեցիները՝ ս. Յովհաննէս և ս. Սոսիս ոք մի առանձին խոմք են կազմում,  
նայելով ոքմերի վրայ գտնուած, ոչ ամբողջ, մի հին արձանագրութեան—և և. Թվին (981) ես Խաչափաթուն, գուստը Գավկայ, յազդէն Բագրատուննաց, կե-  
նակից Սինքերիմայ ար... (Չնշուած) լինող ս. տաճարացս յիշեցէք ի մաքուր....»

մնացեալները խոնարհեալ կիսաւեր վիճակի մէջ են գանւուռ անցեալ դարերում պարբերաբար տեղի ունեցող մեծ երկրաշարժների ենթակայութեալ կանգուն և կեղեցիներն են ո. Աստուածածնի, ո. Գէորգայ \*) և Գետարգել ո. Նշանի տաճարները, որոնցից վերջինս նորաշէն է և կառուցուել է անցեալ դարու մկրք-ներում (1811 թ.) Ղարասա էֆէնդինց Յակոր աղայի միջոցներով, ինչպէս երեսում է վրան գտնուած արձանագրութիւնից Ներկայ վեհ. հայրապետի Վարագայ վանքի վանահայրութեան ժամանակից, անցեալ դարի կէսերքում, այս գողտրիկ եկեղեցին ծառայում է իրրև մատենադարան-թանգարան, ուր ամփոփւում է ներկայումս պահարանների մէջ դարսած 400-ի մօտ ձեռագրեր գրչագիր մատեանների, մեծաւ մասամբ կրօնական-վարդապետական բովանդակութեամբ, և 1000 կտորից աւելի տպագրեալ մատեաններ—միայն թանգազին ազատեալները 1896 թ. աւերումներից. \*\*)

Լինելով իսկզբանէ անտի Վասպուրականի ամենահարուստ վանքը, և եպիսկոպոսանիստ կենտրոն մի ընդարձակ թեմի, որ բովանդակում է 40-ից աւելի մեծ և փոքր գիւղեր,

(շարունակութիւնը ջնջուած) ... շնորհի են Սենեքերիմ արքայի օրով նրա նըշանաւոր գաղթից մի քանի տարի առաջ:

\*) Ս. Գէորգ եկեղեցու մէջ աջակողմեան գասում գտնուում են զերեղմանների երկու տապանագարեր, որոնց վրայ որոշակի կարգացւում է. ա) «Թվին Դէչ» (1022), այս է հանգիստ տեսան Պետրոսի կաթողիկոսին որ ի Ցաղպետութեան մէջ արգելեաց առաջի Վասիլ արքային». բ) Այս է հանգիստ Սենեքերիմ թագաւորին թվին Դէչը. Ինձ թւում է, որ այս պատմական անձնաւորութիւնների, որոնք այնքան էլ պատաւոր գերեր շեն կատարել մեր նախնաց պատմութեան այդ շրջանի արինոս թատերաբեմի վրայ—մահուանից յետոյ միմիայն նրանց մարմնի նշխարները՝ գուցէ և նշխարների մի մասը՝ տեղափոխուել են իրանց սիրելի—հայրենի մենաստանը գուցէ նրանց մի կտակի համաձայն, որպէս ետք որպէս յայտնի է, Գետաղարձ Պետրոս կաթողիկոսի շըբիմը մինչև այժմ կը գանւում է Սկազի (Սեբաստիա) մերձ նրանից Յ մղոն միայն հեռաւորութեան վրայ գտնուում ո. Նշան մենաստանի ո. Կարապետի տաճարին մէջ:

\*\*) Այսաւել արժէ յիշել, որ Վան-Ցուպում, եթէ Վանայ Խովի կղզիներն էլ հետար հաշւենք, կայ այս բոպէիս ապահովալէս 2000 կտորից աւելի ձեռագիր մատեան—400-ը Վարագ, 1500-ը Երեք անապատներում (առնուազն 500-ական հաշւելով իւրաքանչւր կղզու ձեռագիր հաւաքածուները) և մի քանի—2-300 հարիւր էլ քաղաքի եկեղեցիներում (օր. Ապողոս եկեղեցին Բերդարարագում 120 կտոր ձեռագիր մատեան ունի), Կարիք կայ աւելացնելու, որ մեր գրականութեան այդ թանկազին մնացորդները անյատութեան են մատնուել մինչեւ այսօր էլ, միայն մնալուածան Փիլդայէմեան վարդապետն է, որ մի քանիսի միայն յիշատակարանները օրինակելու համար խանգարել է նրանց փոշիով պատուած անդրբութիւնը:

Վարագը եղել է ամեն անդամ ծաղկեալ և բազմանդամ միաբանութիւն ունեցող մի մենաստան, որով և բազմարդիւն և լուսատու վառարան իր կարեոր հայաբնակ շրջակաքին. Նրա ազդեցիկ վանահայրերը վերջին մի քանի դարերի ընթացքում եղել են և Վանի առաջնորդներ, հովուելով միաժամանկ Վանն ու Վարագը, կապելով ժողովուրդը (վանեցի) Վարագայ նուիրակ մենաստանին հետ սերտ և ամուր կապերով, Նրա թեմերից աշքի են ընկնում իրանց մեծութեամբ և հարստութեամբ Աւանց, Արճակ և Շահպաղի մեծ գիւղերը. իր սեպականութիւնն է կազմում այս 20—25 տարիներից ի վեր, Խոշապ (Վան-Տոսպի արքեալք) գաւառի Սալախանէ կոչուած արգասաբեր գիւղը, որը գնել է Խրիմեանն 80-ական թւականների Հայաստանի ահաւոր սովից յետոյ սովելոց յանձնաժողովի տնտեսած մի կարևոր գումարով, և որին սակայն այժմ անտէրութեան երեսից կորսուելու վտանգն է սպառնում՝ դառնալով ինչ որ քիւրդ աշայի կալուածը և նրա հոտերի ընդարձակ արօտավայրը, Այս թեմերից բացի՝ վանքը ունի ներկայումս հարուստ երկրագործութեան, ոչխարների և այլ ընտանի անասունների աշքի ընկնող երամմեր և հարուստ արօտավայրեր թէ իր շրջակաքում և թէ Վարագայ լեռան կանաչաւէտ փէշերի վրայ, որոնք ամենայն եղանակում՝ բացի ձմեռուանից՝ ծածկուած են լինում ճոխ մշտադալար բուսականութեամբ; Այլև վանքի ձորակը շրջապատող ընդարձակ անտառներ, ծառաստաններ, առաստ ջրեր, քաղցրահամ և սառնորակ աղբերակներ Վարագայ լեռան ջրաշատ շտեմարանից բղանող, որոնք բանեցնում են վանքի մի քանի ջրաղացները և ոռոգում նրա այգիներն ու պարտէզները:

Վարագայ վանքի արևելա-հիւսիսային կողմի լեռան հովտի մէջ մի բարձրավանդակի վրայ Վարագ լեռան կրծքին մինչև ալժմս էլ մնում են հին՝ Վերին-Վարագի հսկայ շինութեան փառաւոր մնացորդները, նրա որմերը գրեթէ ամբողջութեամբ, աւերակների կարևոր մասերը, քարերը, միակտուր, գլանաձն մեծ սիւները տարիներ առաջ կողոպտուել և ծառայել են Վանում թիւրք մզկիթների շինութեան. ինչպէս հաւաստում են, Ուլլա կոչուած նշանաւոր ջամփի (մզկիթ) երկու մեծ սիւները գեղեցիկ դրուագներով բերուել են Վերին-Վարագի աւերակներից; Այս աւերակ մնաստանին մերձ հոսում է մի փոքրիկ աղբերակ՝ Քրիստոնի-Աղբեր կոչուած:

Վերին-Վարագին մերձ Վարագայ լեռան բարձրութիւնների վրայ բնակիչները ցոյց են տալիս աւանդաբար՝ Հռիփսիմէ կոյսի ապաստանավայրը՝ Դալիլիս կոչուած, այլ և մի այր, ուր ճգնել է ինչ որ Թողիկ կոչուած ճգնաւոր, որի ազօթքով ինչ-

պէս աւանդում են պատմագիրներից շատերը, Ներսէս-Շինող կաթողիկոսի օրով 653-ին յայտնուել է ս. Հոփիսիմէ կոյսի կրծքի Քրիստոսի խաչափայտի կտորը, երբ որ լոյսեր է փայլատակել, և լուսեղէն 12 սիւներ իջել են զանազան տևղերի վրայ Վան-Տոսպ գաւառում, որոնք կազմել են ներկայ Վան-Տոսպի վանքերի և տաճարների կառուցման սկզբնապատճառը։ Յիշեալ խաչափայտը երկար ժամանակ պահպանում էր իբրև սրբութիւն Վարագայ վանքի մէջ, որից և առել է նա իր ս. Նշան անունը, և որի գիւտը կազմում է հաւանօրէն նրա հիմնարկութեան սկիզբն ու թւականը (658)՝ մինչև 1661 թ., երբ Խոշապքաղաքի մեծ անառիկ բերդի տէր Թաթար-Ջոմար բռնակալը աւերում և թալանում է վանքը և գերի վարում ս. Նշանը, այդ անձեռմենի համարուող օրբութիւնը Զորս տարի յետոյ միայն ժամանակի վանի ամենաազգեցիկ մեծատուն Խոճա-Մարիսասի միջնօրդութեամբ ազատում է և բերւում այս անգամ Բերդագաղաք, Վանի Տիրամայր եկեղեցին, որտեղից էլ 1717-ին տեղափոխում է նոյն Տիրդաքաղաքի առաջնորդանիստ էջմիածին կոչուած եկեղեցին, որ յետ այնորիկ կոչում է ս. Նշան, ուր պահուում է մի ծածուկ պահարանի մէջ մինչև այսօր էլ իբրև ապահով տեղ, և շատ հազւադէպ պարագաներում միայն—ժանտախտի, սովոր դէպքերում է դուրս հանուում \*):

Վարագայ վանքը այժմ աննախանձ վիճակի է մատնուել, մօտիկ անցեալում տեղի ունեցող հայկական ահռելի կոտորածների ժամանակ սա էլ ենթարկուեցաւ հարստահարութիւնների. այդ ժամանակից ի վեր ամեն ինչ փոխուեցաւ. ապականիչ մի հով անցաւ կարծես այդ սրբավայրի վրայից սրբելու, քշելու նրա միջից լաւը, նուիրականն ու օգտակարը Անցեալում միշտ ունեցած հոյակապ միաբանութեան մի-երկու (մէկ հոգեորական, մէկ աշխարհական) բեկորները են միայն մնացել, Հայաստանի այդ մուայլ հորիզոնին վրայ մերժ ընդ մերթ շողեր արձակող, լուսաւոր, հրաշալի խօսքերի ազդեցիկ գործիքը՝ տպարանը իր պարագաներով օտարին, բանաւորին է ծառայում ներկայումտ. Վանքի աւերուած նիւթական շէնքերը միայն նորոգւում են հետզիւտէ, և մի քանի տաճնեակ որբերից կազմուած խղճուկ որբանոցը ծառայում է կենդանութիւն տալու վանական թըրած կեանքին, բայց այդ արուեստական ճիգերը ոչ մի բանի չեն

\*). Վանի տարեգիրները յիշում են իբրև բացառիկ դէպք նրա գուգո հանուելը և ժողովրդին ի ցոյց գրաւելը 1755 թ. Վանում եղեացող մի մեծ մահարաժամի ժամանակ։

ծառայում, ըստ որում պակասում է նրա մէջ կենսատու, կենդանարար ողին:

2 Ս. Գրիգորի՝ Սալնապատու վանքը.—Վարագ լեռան հիւս. փեշերի վրայ մի գեղեցիկ ձորակի մէջ շինուած է ս. Գրիգորի փոքրիկ մնանատանը յանուն Գրիգոր Լուսաւորչի, որը հին ժամանակներում Սալնապատի վանք և մեր պատմագիրներից էլ շատ անգամ Զորավանք է կոչուել: Միմիանցից շատ մօտիկ՝ կից շինուած Յ մատուռները՝ ս. Գրիգոր, ս. Կարապետ, ս. Աստուծածին, նրանց շրջապատող մի քանի միաբանական և ուխտաւորների սենեակներով՝ կազմում են այս գեղեցիկ մենաստանի ամբողջութիւնը, որ իր մեզմ և հիւսալի կլիմայով և քաղցր, վճիռ ջրերով հանդիսանում է իրը ամենայարմար ամարանց և օդասուն բնակավայր և ապաստանավայր վանեցիների՝ քաղաքի ամառուայ տապից խուսափող: Մեր տարեգիրներում յիշւում են մի քանի նորոգութիւնները այս վանքի վրայ եղած, նախ 1260 թ., ապա նոյն վանքի վանահայր Ստեփանոս եպիսկոպոսի ժամանակ և նրա ձեռքով: 1559 թ. վանեցի Մէլիք-Ղուլիճան և որդիք նորոգել են ս. Աստուծածածինի տաճարը միայն, և յետ այնորիկ մի քանի անգամներ էլ: Այս վերջին տարիներում ուխտաւորների համար միայն շինուել են յարմարաւոր սենեակներ բարձր գիրքով, որոնք շրջապատում են վանքը, առաւելապէս նրա արևելա-հարաւոր իսկ բուն վանքի վրայ կատարուել են աննշան նորոգութիւններ՝ մի քանի փոքր կարկատաններ միայն:

Սալնապատու ս. Գրիգորի վանքը մօտիկ անցեալում ունեցել է ճոխ և քաղաքաթիւ միաբանական հոյակապ ուխտ. յիշւում են օր. Սալնապատու Յովասափ եպիսկ. (1628—1642), Եղիշէ վարդապետ 1868 և ուրիշները նշանաւոր և իրանց ժամանակի գիտնական հոգեւորականները. այժմ տարաբախտարար ներկայացնում է վանքը մի միաբանական անապատ, ամայութիւն. մի փոխ բերած ծերունի վարդապետ միայն տարին միերկու անգամ աղօթքի մրմունցներ է հնչեցնում Աստուծոյ այդ հինաւուրց տաճարների մէջ: Վանքից քիչ հեռու մի բարձր բըլքակի վրայ գտնուում է մի փոքրիկ մատուռն. Նրան մերձ գտնըւում է մի աղբերակ. այս բըլքակի վրայ կարծւում է լինել աղօթավայրը ս. Գրիգոր Լուսաւորչի: Շատերը նոյնացնում են Սալնապատու ս. Գրիգորի վանքը նրանից արևմուտք երկու մըղոն հեռաւորութեան վրայ գտնուող Զորավանք գիւղում (որ այժմ թուրքաբնակ է) գտնուող համանուն վանքին հետ, որի աւերակները միայն երեսում են ներկայում, գիւղին մերձը, և որը պիտի եղած լինի հաւանորէն մեր մի քանի աստանդական

հայրապետների ապաստանարանը, ուր պահուելիս է եղել Լուսաւորչի գաւազանը և հայրապետական քողք, որոնք հին ժամանակներում հայրապետական աստիճանի նուիրական զարդերն ու անօթներն էին կազմում։ Դեռ մի քանի տարիներ առաջ վանի մի մզկիթի գաւթից դուրս եկաւ մի տապանաքար իր արձանագրութեամբ Դրասխանակերտցի Եռվաննէս Ե. կաթողիկոսին պատկանող, որ իր վերջին տարիներում ապաստանել է այդտեղ և կնքել իր երկտաւոր կեանքը իր պատմական երկասիրութիւնը վերջացնելուց անմիջապէս յետոյ,

3)Կարմրուորի Ս.Աստուածածնի փոքրիկ վանքը գտնւում է Զորավանքից դէպի հարաւ Շուշանից լերան սարալանջերի վըրայ, քաղաքից 5 մզն հեռու դէպի արենելք բարձրահայեաց դիքով։ Այս փոքրիկ վանքը շրջապատում են մի քանի հազար տարուայ հնութեան դրոշմ։ Կրող աւերակների մնացորդներ, որպէս ցոյց են տալիս նրանցից պարբերաբար՝ բայց ոչ կանոնաւոր՝ պեղումներով դուրս եկած զանազան իրեր, մնրթ էլ բնեռագիր, ամենայն հաւանականութեամբ Ուրաղեանց շրջանի ժամանակներից մնացած։

Կարմրուորի վանքից դէպի արևմուտք Վանայ դաշտի վրայ նայողի առաջ բացւում է մի պքանչելի տեսարան—Վանայ ծովակը՝ իր ծփուն կոհակների շողշողումով, որպէս արծաթի շրջթաներ՝ նրան շրջապատող լեռներով՝ կանաչազարդ դաշտը, որի վրայ սփռուում է քաղաքը լայնարձակ նստուածքով և խիտ այգեստանով։

Վանքի հին նորոգութիւններից մէկը յիշւում է 1615 թ. նորոգութիւնը նոյն վանքի Զաքարիա վարդապետի վանահայրութեան օրով, վանեցի Խոնճ-Միքրաքի ձեռքով։ Մի քանի տարի առաջ էլ նորոգուում է վերջին աւերումներից յետոյ յարմարելու համար մի որբանոցի, որ մի վանեցու գովելի ջանքերով մի քանի տարի գոյսութիւն ունեցաւ։

4) Ս. Խաչ վանքը շինուած է Վանայ դաշտի հարաւային սահմանի վրայ գտնուող բրակի վրայ, որ իր անունով է Կոչւում։ Կուռուպաչ գիւղին շատ մերձ գտնուող այս վանքը, որ խորին հնութեան՝ դրոշմ է կրում իր վրայ, ամենայն տարի գրաւում է դէպի ինքը ուխտաւորների ահազին բազմութիւն, մասնաւորապէս քաղաքի Արաք կոչուած թաղից և շրջակայ գիւղերից։ Զարմանալին այն է, որ վերջին տարիներում կարողացաւ նմանուել հարուստ և մեծ վանքերին և իր աղքատիկ և սուզ միջոցներով և կալուածների արդիւնքով և չնշին եկամուտներով կարողացաւ պահպանել մի փոքրիկ որբանոց 10—15 որբերից, Վերջին տարիներում նոյն վանքի հոգաբարձութեան

ջանքերով շինուեցաւ վանքի համար մի քանի կոկիկ շինութիւններ միաբանութեան և ուխտաւորների համար։ Մէկ ծերունի վարդապետ և երկու տիրացու միաբանական մարմին հսկում է այս փոքրիկ մենաստանի պահպանութեան վրայ։

5) Ի հնումն Վան-Տոսպում ցիրուցան բազմաթիւ վանքերի այժմու ներկայացուցիչ եղող այս մի քանի վանքերից շատ արժէ յիշել և ո. Խաչ վանքից գէպի արևմուտք՝ Արտօմէդ քաղաքին մերձ՝ ծովի վրայ նայող և գեղեցկանիստ մի բրակի վրայ շինուած կոնկու ս. Աստուածածնի վանքը, որ ներկայումս անտէրութեան է մատնուել. Այս վանքը իր անունն առած լինի իրը թէ պատարագի ս. Խորհրդի ժամանակ զինու բաժակի պակասութեան համար խազողի մի ողկոյզ բերող կը-սունկից, որպէս աւանդում է Հ. Հ. Սարգսեան \*). բայց այս տեսակ պարագաներում բանաւոր է ենթադրել, որ յաճախ պատմուածքները, աւանդութիւնները ժողովրդի կողմից յերիւրում են զանազան անունների վրայ, քան թէ անունները դուրս են գալիս այդ տեսակ անհեթեթ իրողութիւններից, ինչպիսին ստեղծելու ընդունակ են ժողովրդի ջերմեռանդ երեակայական թռիչքները։

## IV

Այս երկրի պատմութեան անյիշատակ ժամանակներում Վան-Տոսպ գաւառոր հանդէս է գալիս իրեն կուլտուրական և ուազմագիտական նշանաւոր կենտրոն, որի սահմաններում իշխող ժամանակի քաղաքակրթութեան կարենոր մէկ ներկայացուցիչ եղող հարստութեան ծագման և պատմական զարգացման վերաբերեալ շատ կցկտուր և ցամաք տեղեկութիւններ են հասել մեր ձեռք տարաբախտաբար այն սակաւաթիւ բնեռագիր արձանագրութիւնների միջոցով, որոնք սփոռուած կան այդ հըգօր տէրութեան հինաւուրց սահման կազմող երկրների մէջ ամենայն կողմ ցիրեցան, որոնց թիւը՝ ինչքան հետազօտող գիտութիւնը կարողացել է լոյս աշխարհ հանել՝ 100-ից հազիւ է անցնում, որոնցից 90-ի չափ գիտութեան սեպհականութիւն են կազմում այս բոպէիս. Այդ հարստութեան ինքնակալների լեզուն, որպէս և գրութեան օրիգինալ ձեր մեծ դժուարութիւններ էր յատուցանում դեռ մի քանի տարի առաջ՝ ուսումնասիրողի քայլերի հանդէպ, ի բաց առեալ Շարրիտուրիս I ինքնակալի (885—820 Ն. Ք.) երկու արձանագրութիւնները, որոնք

\*) Հ. Հ. Սարգսեան. Ցեղազրութիւն, 1864, Վենետիկ. 256:

դրոշմուած են ասորական բնեռազրերով, որոնք հետզհետէ հարթւում են:

Դժբախտաբար մինչև այժմ էլ որոշ չի կարելի ասել, թէ ինչպէս էր յորջորդւում այդ հոյակապ տէրութեան մէջ ապրող ազգաբնակութեան ցեղական ազգային անունը: Նրա միապետները անուանում են մերթ՝ արքայ հզօր, արքայ Բիայնայ, արքայ՝ հզօր քաղաքին Տուշպաշ, այլև «երկիր Ուրարդու», «աշխարհ հայերի»՝ առաւելապէս թէնամիների ձեռքով փորուած արձանագրութիւնների մէջ, Բնիկ—վանեան բևեռածն արձանագրութիւնների մէջ ամենից գործածականն է Բիայնայ անունը իբրև հին անուն վան քաղաքի կամ Վան-Տոսպ գաւառի, և որի անունով հաւանօրէն կանչուել է և ազգաբնակութիւնը: Դարեհեան արձանագրութիւններից մէկի մէջ պատահում է և Հարմնիապ (Արմենիա?) անունը: Թէ ինչ աստիճան նշանակութիւն ունի Խալդէական ազգ, կամ Խալդէանք անունը, որ տալիս են Բելք և Լեման գերման գիտնականները այդ ազգին իրանց վերջին հետազոտութիւնների վրայ հիմնուած—չի կարելի որոշ ասել, այդ ենթագրութեան հիմք կարող է լինել գուցէ (այն էլ շատ թոյլ հիմք) այն հանդամանքը, որ նրանց Աստուածների գլխաւորը կոչուել է «Խալդիս», որի անունով քաղմաթիւ մնեաններ են եղել այդ լայնածաւալ տէրութեան ամենայն մասում:

Այսպէս թէ այնպէս արձանագրութիւններից այս յայտնի է լինում, որ Տուշպա քաղաքի կամ «Ուրարդեան հարստութեան»—ինչպէս անուանում են սովորաբար—միապետների սկզբնական ծայրը հասնում է ոմն ինքնակալ Հուտապրիսի՝ IX դարում Ն. Ք., որից անմիջապէս յետոյ երևան է գալիս Արամէս (860—845), որ մի նոր հարստութեան հիմնադիր է երևում, որին յաջորդում են 10—15 միապետների մի ոչ շատ որոշ և աննդհատ շարք մինչ VI-րդ դարու սկզբները Ն. Ք., երբ ընդհատում է յանկարծ յիշատակութիւն այդ տոհմի մասին՝ կազմուվ մութ անորոշ և տարտամ մի անցման շրջան, ոտից յետոյ հայկական թատերաբեմի վրայ հանդէս է գալիս հիւս.-արևմտեան կողմից արշաւող մի թարմ, ընտիր առանձնայատկութիւններով օժտուած հայկական սերունդ, որին պէտք է տեղի տուած լինի ուրարդու կամ հայերի պետութեան իր ջլատուած և քայլայուած կազմով:

Տուշպան կամ Վանը եղել է ուրարդեան կայսրների քաղաքական կենտրոն՝ Արամէսի յաջորդներից Մինուաս 1-ի օրով (VIII դար) որի անմիջական յաջորդը Արդիստիս 1-ի հըս-

կայական շինութիւններն են ներկայացնում Վանայ քերդի քառանիստ սրահները և ուրիշ շինութիւններ։

Երկիր շինութեան և ներքին բարեկարգութեան մասին  
մտածելուց և աշխատելուց դուրս Տուշպայի հզօր արքունիքի  
ամրող կեանքը կազմում է պատերազմների և աշխարհակալու-  
թիւնների անընդհատ մի շարք՝ Ասորեստանի և Նրանց անկու-  
մից յետոյ (VI դարում ն. թ.) բարելուսացի միավետաների ընդ-  
դէմ Սրամէս (860—843) արձանագրութիւնների (ասորական  
և վանեան) մէջ որպէս հզօր և անընկճելի ախոյեան Ասորես-  
տանի Սաղմանասար Ա-ի (860—826), Մեծն Սրդիստիսի որդին  
Շարրիտուրիս II (755—780) անխոնջ հակառակորդ Տիգլեթպէ-  
լէսէր Ա-ի (745—727), Մուզաս I (780—714) անհանդիս ո-  
սոխ Սարգսն Ա-ի (722—705):

Այս անվերջ պատերազմների շարքից երեսում է, որ Տուշ-պայի կամ Ուրարդուի այս աղաւասէր և յաւէտ ըմբռատ հշ-խողները եղել են ամենավտանգաւոր արգելվներ ասորաբարե-լական լայնածաւալ և կլանող աշխարհակալութեան, Արդիստիս առաջինը մասնաւորապէս (780—755) ամենածանր հարուածնե-րըն է հասցրել Նրանց արշաւող ընթացքին, Ուրարդեան թա-գաւորները իրանց աղաւ ժամանակներում զբաղուել են փո-խադարձաբար իրանց մերձակայ հպատակ մանր իշխանութիւն-ները զսպելով, որպիսին եղել են Մաննա (Ուրմիոյ լճի արևմտ. ափը), Տունիբան, Մուսասիր, (Տարոն?), Արսանիա (Արածանու հովիտ?), Դայանի (Daiaeni), Էտիունի (Etiuni), Էրիահի (Eriahi) ևայն, որոնք հանդէս են գալիս արձանագրութիւնների մէջ մերթ ապստամբներ ուրարդեան իշխանական լժից, իսկ յա-ճախ նուածուած դաշնակիցներ հանդէտ Ասորեստանայ,

Ուրարդեան քէոնիկների իշխանութիւնը հիւսիսից տարածում է մինչև Գեղամայ ծովի լոջակայքը, նոյնիսկ մինչև Կոմկաս լեռան ստորոտները:

Անդրկովկասում ցայսօր գտնուած Դաշբուռունի (ըստ արձ. Luhjunimi) Կողքի մօտ, Արմաւիրի (ըստ արձ. Argistihi-nili), Արագած-Ղուլինանի (Kuliaini), Օրդակլուի (Kiehuni) և տասնից աւելի բնեառգիր արձանագրութեաններ, գլխաւորաբար Սևանայ լճի հարաւային ափերում ցոյց են տալիս Բիայնայի հզօր ինքնակալների լայնածաւալ աշխարհակալութիւններ և արշաւանքների անջնջելի հետքերը\*):

<sup>\*)</sup> Клинообразные надписи Закавказья, изслѣдованіе М. В. Никольскаго. Москва, 1896. 8иа к ирш քաղաքածօրին թարգմ. պրֆ. Խաչատրեանի, ի Վենեսիլի, «Թագմագէց», 1897, № 1—2 և առանձին արտապութ.

Վանում աւերակների տակից, գլխաւորաբար Թոփրագ-  
դալէի միջից պեղմներով երևան եկած ուրարդեան կուլտու-  
րայի մնացորդները—զանազան անօթներ, չենքի կտորներ, կաւ,  
կիր, հակայ աղիւսներ, վահաններ և հսկայ չենքերի պատկառե-  
մբ բեկորները՝ յատակօրէն ցոյց են տալիս, որ այդ հարստու-  
թեան շրջանում Տուշպան եղել է քաղաքակրթութեան զօրեղ  
կենտրոն, և նրա բնակիչները—որպէս ոստիկաններ այդ իշխա-  
նութեան ժամանակի կուլտուրայի բարձրագոյն աստիճանի վը-  
րայ գտնուող ժողովուրդ:

Իրանց պաշտած և երկրագած աստուածները և իրանց  
անվերջ և յանդուզն պատերազմներին յաղթանակ պարզնող  
դիք եղել են—Խալդի, Թէիշպա, Արդինի և ուրիշները, որոնց  
չեն խնայել Բիայնայի միապետներն իրանց արքայավայել և  
աստուածապատիւ պարգևները ու պատարագը յաւերժացնելով  
քարերի վրայ, անջինջ յիշատակի համար, իրանց սրբազան գո-  
հաբերութիւնները\*):

Հայկագեան կոչուած հայկակ. հարստութեան Տիգրան Մե-  
ծըն (585—525 Ն. Ք.), ըստ Խոր.՝ որդի հատուածեալ Երուանդի,  
Վանը բնակեցրել է քաղմաթիւ հրէայ գերիներով, որոնց տեղա-  
փոխել է ի Պաղեսափին արած մեծ յաղթական արշաւանքից վե-  
րագառնալիս \*\*): Քրիստոսից յետոյ IV դարում Շապուհ  
պարսից արքան աւերտւմ է և կործանում Վան քաղաքը յունաց  
դէմ մղած պատերազմների ժամանակի\*\*\*), Երկրի դիրքը, նրա  
անառիկ միջնաբերդը և բնական այլ յարմարութիւնները գըլ-  
խաւոր պատճառներն են կազմում անշուշտ, որ ամենահին ժա-  
մանակներից սկսեալ տեսնում ենք ինքնուրոյնութեան և  
ըմբոստ անկախութեան ոգին զօրեղ պահուած այս երկրի տի-  
րապետողների և նրա բնակիչների մէջ:

Արծրունիների տոհմը Վան անառիկ մայրաքաղաքով,  
նոյնիսկ զանազան հարստութիւնների տիրապետութեան ժամա-  
նակ երևան է գալիս որպէս կիսանկախ և հզօր իշխողներ  
իրանց սահմաններում և մերթ որպէս առանձին թագաւորու-  
թիւն՝ դիմաւոր իշխողների տկարութեան պահուն, ինչպէս ե-  
ղաւ Բագրատունեաց Սմբատ I-ի օրով, X դարու վերջե-  
րում. այդ բաների համար շատ անգամ էլ չեն զգուշացել, չեն  
քաշուել խտրութիւն չը դնելու համար միջոցների մէջ, նրանք

\* ) Մհերի գուան արձանագրութիւնը՝ Խուզասի Խալդիսին նուիրած զա-  
հաբերութեան արձանագրութիւնը և ուրիշները:

\*\*) Մ. Խոր., III—I:

\*\*\*) Նոյն, III. և Փատառ, IV—ԵԵ:

միաբանել են մի օտար ուստիկանի և աղջութեան թշնամի արար կամ թիւրք բռնակալի հետ և դաւաճանել իրանց տէրերին, որի համար էլ չեն կարող խուսափել այն դատապարտութեան կնիքից, որը դրոշմում է նրանց ճակատին համազգային ամսկողմնակալ պատմութիւնը հակառակ Թովմայի (Արծրունի) հզօր, բայց միակողմանի պաշտպանութեան և հովանաւորութեան:

Խ դարուց սկսեալ Արծրունիների աստղը թեքւում է դէպի արևմուտքը. Տուշպայի հզօր արքաների արիւնը ցամաքում է Վանի իշխողների երակների մէջ, Բիայնայի ինքնակալներին ոգնորող մուտան քնանում է այլն և Բարքերը մեղկանում են յունական յոռի աղդող յարաբերութիւնների շնորհիւ բիւզանդական գեղիս և ցոփի կենաքը իր վասարակար հետևանքներով մուտք է գտնում նրանց արքունիքի մէջ. Սենեքերիմ, Արծրունիների հարստութեան վերջին իշխողը, 1021 թ. յանձնառու է լինում Վասպուրական ընդարձակ աշխարհն իր ծաղկած հոյակապ մայրաքաղաքով և բազմաթիւ վանքերով ու մենաստաններով փոխանակել ինչ-որ յետ ընկած տեղի—Աըվազի հետ փոքր Ասիայում\*):

Բիւզանդակ. պետութիւնն էլ չի կարող պահպանել այս կարեսը աշխարհը, և յետ այնորիկ Վան-Տոսպը լի շրջականերով և բնակիչներով մինչև 5—6 դար ներկայացնում է անընդհատ արեան, կողոպուտի, և աւերածութեան թատերավայր. ապա փոխիսակի անցնում է սելջուկեանց, թուրքմէնների և պարսից ձեռքը—1387, 1894 թ.-թ. գրաւում է Լէնդթէմուրից, որ թողել է Վանում թիւրք տարրին միայն առանձնայատուկ արիւնաբռու գործողութիւնների և հրէսային սպանութիւնների տիսուր յիշատակներ: 1425 թ. թուրքմէն Խաքէնդէր-բէյի ձեռքն է ընկնում, ապա երկար տարիներ թիւրքերի և պարսիկների մէջ կուածաղիկ դասնալրւց յետոյ 1686 թ. օսմանեան թիւրքերի վերջնական տիրապետութեան լուծի տակն է ընկնում, որը շարունակւում է մինչև այսօր: \*\*)

\* ) Լառիվերտցի Արխա. վրդ., Պատմազրութիւն. III.

\*\*) Վան-Ցոսպ գաւառի և վանեցիների այս հինգտարեան տառապանքի և նրա պատմութեան արիւնու էջերը իրանց մանրամանութիւններով դրոշմուծ տեսնում են վերջին դարերի բազմաթիւ, մեծմասամբ վասպուրականցի, տարբեգիների տարեգրութիւնների մէջ, օրոնցից գլխաւորները կարելի է համարել—1) Սիմոն վարդապ. Պալուանցի 2) Մինասենց Թովմա վարդապ. Աղթամարցի, 3) Յովհ. կրօնաւոր Արճիշեցի, 4) Բարսեղ վարդապետ Վարդակեցի, 5) Գր. դպիր Վանեցի, 6) Բարդուղ. վարդապ. Տուշանցի, 7) անձանօթ մի տարեգիր, Վանեցի, 8) Բէլլար Վանեցի, 9) Մուրատեան Վանեցի 10) անանուն մի տարեգիր, 11) Յար. քահանայ Խալֆայ Վանեցի. 12) Յակոբ եպիսկոպոս Թոփուղեան, վանահայր Լիմ անապատի, 13) Յավոչի վարդապետ. Լմեցի և ուրիշները, օրոնցից շատերը

Ճակատազրորէն յաւէտ տառապելու համար գոգցես ըստեղծուած հայը թիւրք փաղիշահների տիրապետութեան ներքոյ էլ Տոսպ դաւառում հանգիստ և ապահով օրեր վայելել չի կարողանում Վան քաղաքը դառնում է իշխողների նահանգական կուսակալանիստ կենտրոն, օսմանեան վերջնական տիրապետութիւնից սկսեալ մինչև ներկայ թւականը Վանում նստող վալիները (կուսակալ), որոնց թիւրք հարիւրից անցնում է, իւրաքանչիւրք մի-մի դահիճ, բռնակալ է եղել թշուառ և ստրկացած ազգաբնակութեան գլխին\*): Այս ընչափազց հրէշների համեղ զոհերն էին ներկայանում ամենից աւելի ժամանակի հայ մեծատունները, որոնք խոջա էին կոչւում ընդհանրապէս. այդ աչքի ընկնող խոջաներից, որոնք անշուշտ մեծամեծ ազգեցիկ դերեր են խաղացել վալիների կառավարութեան գործում, աջակցելով և օգնելով նոցա թէ նիւթապէս և թէ բարոյապէս, յիշում են խոջա Խանամիքն (1687 թ.), խոջա Ամիրիսան, խոջա Մարիսաս, խոջա Սարուխան, Ռոհջան աղէն, Ղարասէֆէրեան Ախիջան աղէն (1741), խոջա Սահակ, (1766). Մի նոր վայի Վան մտնելիս, առաջին գործն էր լինում երկրի հարուստներից, ոլխաւորաբար հայերից՝ իհարկէն նուէրներ հաւաքել. վայ այն հարուստին, որ կը համարձակուէր աչքաթող անել կատարելու այդ նուիրագործուած աւանդական պարտականութիւնը, այդ դէսքում իր կարողութեան մեծագոյն մասից ձեռք պիտի քաշէր նաւ Տուգանքներին վերջ չէր լինում այնժամ. Տարեգիրները յիշում են յատկապէս խոջա Ալխասի կախաղանի վրայ բարձրանալը (1677 թ.) Վանի Բաքր-փաշայի ձեռքով, որպէս և Ղարասէֆէրենց Յակոր աղայի անագորյոյն մահը իրանց դրան մօտ եղող մի կամուրջի վրայ Բերդաքաղաքում, չը նայելով որ՝ որպէս ասացի՝ այդ հարուստներից շատերը մեծ դիրք և աշատութիւն ունէին տեղական ազգաբնակութեան վրայ, որպէս և ազգեցիկ կարևորութիւն կառավարչական շրջանակներում

հաւաքել էր Վարագայ միաբան մեղուաշան Փիրղալէմեան Ղասնդ վարդապետ, որի նեկայում էջմիածին գանսուղ թղթերի հաւաքածուների մէջ (ինքը վախճանուել է 1892 թ. Երևանապէմում) պակասում են մեր նախնեաց պատմութեան և յիշատակների այլ թանգարին մնացորդները. Կարելի չէ որոշ ասել, թէ նոր են զբանք—արքեզ Մկրեան աւագ քահանան է պահել Պոլսում իրան պահ արքուած միջոցին, թէ Աղանեան Դիւտ քահանայի ձեռքով «վասն ի վերուստա... է եղել Պոլսից էջմիածին բերելիս. Վերջինն աւելի հաւանական է թըւմ ինձ»:

\* ) Վանում նստող փաշաների (կուսակալ) ցանկը տես ի միջի այլոց և Մանանայ., Դ. եպ. Մըստանձատ., Պոլսի., 1884, վերջին յաւելուածը, Քոլող վարժապետի ձևագրից քաղած:

և վալիների աչքում \*): Սարսափելի օրեր: Այսպէս կազմակերպուած անօրինակ բռնակալութեան ճնշող խարազանի տակ հեծող հպատակ, թշուառ ժողովրդի կացութիւնը անտանելի էր. ոչ թէ հպատակ, այլ սարուկ, բառիս իսկական նշանակութեամբ:

Այդ ստրուկի նիստ ու կացը չափած, կշռած ու ոռոշ էր. վայ այն հային, որ համարձակութիւն կ'ունենար երբեկից դուռս գալ ստրուկին վայել վիճակից և շեղուել. վայ այն վանեցուն, որ կը համարձակուէր ձիու վրայ նստած այդեստանից շուկայ գընալ առևտորի համար և վերադառնալ, նա նոյն բոպէին իր կեանքից ձեռք պիտի վերցնէր: Ի բաց առեալ հոգեստրականներից՝ աշխարհական հայը, որպէս ներկայումս էլ, իրաւունք չ'ունէր երկար միրուք թողնելու. այս առթիւ տարեգիրներից մէկը յիշում է, որ «Մուսկի փաշէն թոյլատրել է հայերին միրուք պահել» (1679 թ.): Նորայաջորդները յետ խլած կը լինեն անշուշտ պետական այդ մեծ չնորհը, որ արել էր Մուսկին. որովհետև՝ որպէս ասացի՝ այսօր էլ Վանում ոչ մի հայ չի համարձակուում երկար միտք անել, այդ մոնոպոլիան թիւրք տարրին է պատկանում միայն:

Մի ուրիշ տեղ պատահում ենք, որ 1680 թ. Զան-Փոլադ փաշէն հրամայել է հայերին գօտին (գլխակապ փաթաթոցը) առնել զիսից և ֆէս դնել\*\*): Մի ուրիշ անգամ՝ թէ «Հասան փաշէն» (1712) գեղին սոյն (կօշիկ) հայուն եասալ արաց (արգելեց)։ Եւ եթէ ի նկատի ունենանք այն անտանելի հանգամանքը, որ վալիների իշխանութիւնը տեսում էր ամենից շատ 2—3 տարի Վանում, մեծ գումարներով շատ անգամ էլ արեան գնով ձեռք բերուած, այնժամ պարզ հասկանալի կը լինի, թէ թշուառ ուայան ինչեր քաշած կը լինի այդ մի քանի տարի միայն իշխող և իր յաջորդին միայն ճնշուած արնաքամ և կմակաք դարձած հպատակ ժողովուրդը յանձնող վալիների անսանձ և անվերջ կամայականութիւնների ներքոյ:

Այդ պարբերական իշխանական հարստահարութիւններին կը հետևէին անշուշտ անտանելի թանգութիւններ և տնտեսա-

\* ) Նոյն գերն են կատարել և անցեալ XIX դարի սկզբներում ապրոյ Վանի հայ հարուստաները, որնցից աշքի են ընկել իրանց ոչ այնքան հարուստութեամբ, որչափ աղքեցիկ նշանակութեամբ, Ղարասէֆէրեան Յակոբ և Ալիջան աղաներ, Սալումնեանները, Սոսոյեանները, Սջէմբազյեանները, Փէճիւեանները, մասսամբ Թէրէմէղեանները, Ջարան-բէյ, Կանթարճեանները և ուրիշներ:

\*\*) Ֆէօի գործածութիւնից առաջ վանեցիները իրեկ զմբարկ գործածում էին զեռ մինչև անցեալ դարի կէսերն էլ քուլտ կոչուած բրդէ թանձը և շրէշով պնդացրած մի տեսակ թաղէրէ զմբարկ, որի շրջապատ փաթաթում էին Կարապետիշի կոչուած կապոյտ թաշկինակներ:

կան տագնապ. և իրօք ժամանակագիրները յիշում են աղութեան և մեծ սովերի սոսկալի դէպքեր, ինչպիսին է Սիւլէյման փաշայի օրով, որպէս և 1758 թ. մեծ թանկութիւնները անմոռանալի վանեցու յիշողութիւնից, որք աւանդուել են սերնդից սերունդ։ Այս բոլորը, որպէս և տարերքների ամհաշտ թշնամութիւնը—յաճախ կրկնուող աւերիչ երկրաշարժները \*) պատկերացնում են ճշգրիտ պատկեր այն թատերաբեմի, որք վրայ խաղացել է իր դժուարին դերը վան-տոսպեցի տոկուն հայը՝ երկար տարիներ յամառօրէն պահպաննել կարողանալով իր վտանգուելու մօտ եղաղ զոյութիւնը և ազգային առանձնայատկութիւնները, որպէս և իր հաւատոք։

Պէտք է աւելացնել նոյնպէս, որ մինչև անցեալ դարու կէսերը (1847) օտտոման կայսրութեան տիրապետութիւնը Վան-Տոսպի և շրջականների վրայ անուանական է եղել միայն. մինչև այդ ժամանակ Վանի իսկական տէրերը եղել են քիւրդերը իրանց դաժան և բռնակալ իշխողներով։ Բաղրիսանն-բէպի, Խան-Մահմուդի, Խան-Աւդալի՛ իշխանութիւնների արիւնու օրերը յիշուում են մինչեւ այսօր էլ կենդանի ժամանակակիցներից. միայն 1847 թ. Պոլսից ուղարկուած Օսման-Մահմուդ-փաշային յաջողուում է տեղական ազգաբնակութեան (գլխաւորաբար հայերի) եռանդուն օժանդակութեամբ կալանաւորել ժամանակի հերոսներին—Խան-Մահմուդ, Խան Աւդալ և Մուստաֆա բէկերին, որոնք բանաբար տիրում էին Վանին իր ընդարձակ շրջականներով, վերջնականապէս ամուր հաստատելով թիւրքական սիրապետութիւնը Վան-Տոսպ գաւառի վրայ\*\*).

## ԿԱՐՍԵՑԻ

(Պը շաբանակի)

\*) Հարժէ ասքերութիւնը հայոց մէջ, Կ. Կոստանեան., Թիֆլիս, 1902, էր. 10—11։

\*\*) Գրդական բարբարոս տիրապետութիւնից ազատուելու այս նշանաւոր դէպքը զրի է առել ժամանակակից ուսեալ Յովհաննէս վարժապետ Քոլոդ մի անհամ ոտանաւորով և զըաբար լեզով։